

ՕԳՈՍՏՈՍ 2020

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում	6
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	8
1.6. Մեքենա-մեխանիզմներ	9
2. Առևտրային տնօրինություններ	10
2.1. Բաժանորդների տվյալներ	11
2.2. Հասույթ	11
2.3. Գանձում	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	13
2.5. Ջրաչափեր	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	16
3. Տեխնիկական տնօրինություն	17
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում	22
3.5. Գոտիավորման աշխատանքներ	23
4. Լրատվական ծառայություն	27
5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն	29
5.1. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	30
5.2. Բուժզննում	30
5.3. Դասընթացներ/սեմինարներ	30
5.4. Արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն և անվտանգության ստուգայցեր	31
6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ	32
6.1. Համակարգային ցանց	33
6.2. Բնտերակտիվ համակարգ	34

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ


Մարզ Գեղարքունիք

● «Մարտունի» տեղամասի աշխատակիցների կողմից ք. Մարտունի, Երևանյան փողոցում կառուցվել է $D=63$ մմ $L=350$ զծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով նոր ջրագիծ:



Մարզ Արմավիր

● «Արևելք» ՏՏ «Արմավիր» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Գյուղ Մայիսյան, 1-ին փողոցում գտնվող $d=80$ մմ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=63$ մմ $L=160$ զծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով: Մետաղապլաստե խողովակներով փոխարինվել են նաև թվով 10 բնակիչ-բաժանորդների վթարային վիճակում գտնվող մուտքագծերը:



● *Քարակերտ համայնքի Մարյան փողոցում* գտնվող $d=100$ մմ պողպատե ջրագիծը գնվում էր վթարային վիճակում, հաճախակի էին կրկնվող վթարները, առկա էր ջրակորուստ: «Արմավիր» տեղամասի աշխատակիցների կողմից քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=75$ մմ $L=580$ զծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով: Թվով 23 բնակիչ-բաժանորդների սեփականությունն հանդիսացող տարածքից դուրս տեղադրվել են ջրաչափական դիտահորեր և փոխարինվել են ջրաչափերը:



Օգոստոս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2136
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	22000
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	30115
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	12495
Ջրաչափական հանգույններ ուսուժասիրություն, սխեմաների կազմում	հատ	15
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4990.5
Կառուցված ջրագիծ	մ	4795.9
Կառուցված կոյուղագիծ	մ	519
Վերացված գաղտնի վթարներ	հատ	31
Փոխարինված փական	հատ	20
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	469
Մաքրված դիտահոր	հատ	344
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	34.9
<i>Վերացված վթարներ</i>		
	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1097
Ջրահեռացման ցանցում	հատ	2192
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	413

Օգոստոս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	675	970	606

1.2. ԶՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է օգոստոս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	141	18	4	3	1	0	0	0	0	167
Փոխարինված	517	32	4	3	0	1	0	0	0	557
Տեղափոխված	1	0	0	0	0	0	0	0	0	1
Տեխ. ակտ	128	57	3	1	3	1	0	0	0	193
Ընդամենը	787	107	11	7	4	2	0	0	0	918

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 918 ջրաչափ: Կատարված աշխատանքների 85,73 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Օգոստոս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1480	191	6
2	Մաշտոց	1310	192	5.5
3	Շահումյան	1190	196	5.5
4	Զեյթուն	570	166	24
5	Շիրակ	1670	515	1
6	Ալավերդի	0	87	0
7	Ապարան	0	23	6
8	Արթիկ	1620	24	1
9	Աշոցք	0	3	0
10	Բերդ	80	5	0
11	Իջևան	505	18	0
12	Լոռի	2705	210	0
13	Նոյեմբերյան	0	15	0
14	Սպիտակ	300	20	0
15	Ստեփանավան	150	15	0
16	Թալին	0	15	18
17	Տաշիր	230	7	0
18	Էջմիածին	0	121	0
19	Չարենցավան	1395	100	0
20	Աբովյան	2020	63	6
21	Հրազդան	1890	111	30
22	Աշտարակ	1190	6	195
23	Կենտրոն	710	261	0
24	Հյուսիս	0	196	0
25	Հարավ	0	360	33
26	Էրեբունի	200	133	0
27	Արմավիր	0	100	0
28	Արտաշատ	0	78	0
29	Արարատ	1089	83	0
30	Մասիս	0	40	0
31	Գավառ	490	32	0
32	Սևան	0	89	0
33	Մարտունի	0	21	0
34	Վարդենիս	0	13	0
35	Ճամբարակ	0	14	0
36	Դիլիջան	80	50	0
37	Վայք	0	18	0
38	Եղեգնաձոր	135	24	0
39	Զերմուկ	0	18	0
40	Սիսիան	670	53	0
41	Գորիս	0	30	0
42	Կապան	0	68	0
43	Մեղրի	0	21	0
	Ընդամենը	21679	3805	331

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

Մարտունի կեղտաջրերի մաքրման կայանում փոխարինվել են մաշված հորիզոնական ավազորսիչի պոլիէթիլեն պաշտպանիչ պատյանները և մաքուր ջրի որոշ փականներ, որոնցից կար ջրի արտահոսք կամ չէր գործում: Կատարվել է բոլոր սարքավորումների զննում և կարգավորումներ:

Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում օդամուղի ռոտորի ածխե թերթերը մաշվել էին, որի պատճառով օդ չէր մղվում դեպի ավազորսիչ: Փոխարինվել են ածխե թերթերը և ներկայումս սարքավորումները աշխատում են բնականոն ռեժիմով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	64,133	19,8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	96,320	19,8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	158,389	7
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	155,693	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	118,769	9,9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	15,277	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	12,044	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	24,300	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	9,200	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	5,738	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	136
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	9
Ջրագծերում ճնշման չափում և կարգավորում	1
Այլ	2

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Օգոստոս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Արևելք» ՏՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար օգոստոս ամսվա ընթացքում նորոգվել են թվով 5 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 4 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 11 մեքենամեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վտաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամսանիփներ, առանցքակալներ, կիսաառնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 16 անվադողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 1 մեքենայի մարտկոցը փոխարինվել է նորերով:

Փոխարինվել են թվով 86 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր:



Նորոգվել է թվով 3 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամսանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 6 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 5 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման ռետինե խողովակներ, մխոցներ:

Վերանորոգվել են թվով 2 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուր լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 6 մեքենամեխանիզմների վրա:

Թվով 10 մեքենաների վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 6 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

01.01.2020 թվականին ԵՏՍՍ-ում տեղամասերի թիվին ավելացել է «Թալին» առևտրային տեղամասը ընդհանուր թվով 2020 բաժանորդով, տեղափոխվել է ՄՏՍՍ-ից:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.09.2020 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՍ-ում 339,670, իսկ ՄՏՍՍ-ում՝ 175,190 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2019թ. օգոստոսից-2020թ. օգոստոս ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	433,684	325,545	75,1
		Իրավաբանական անձ	20,227	14,125	69,8
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	193,240	168,608	87,3
		Իրավաբանական անձ	6,902	6,582	95,4
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	626,924	494,153	78,82
		Իրավաբանական անձ	27,129	20,707	76,33

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	467,183	393,352	84,2
		Իրավաբանական անձ	23,815	16,213	68,1
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	254,741	193,240	75,9
		Իրավաբանական անձ	10,204	6,902	67,6
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	721,924	586, 592	81,25
		Իրավաբանական անձ	34,019	23,115	67,95

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 243 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 89 նոր բաժանորդ: ԵՏՍՍ տեղամասերում օգոստոս ամսվա ընթացքում ծառայություններ ստացած բաժանորդների թիվը (այցելությունների թիվը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 47,952 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 12,8 տոկոս, իսկ ՄՏՍՍ տեղամասերում, չնայած Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 18,287 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 9 տոկոս:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՍ-ի և ՄՏՍՍ-ի «Լոռի», «Շիրակ», «Սևան» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և տեղափոխվում են բաժանորդների տարածքից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Օգոստոս ամսվա ընթացքում ԵՏՍՍ-ում ստուգաչափվել է 1,895, իսկ ՄՏՍՍ-ում՝ 1307 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 08.2020
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	748	779	253	1780
		Իրավաբանական անձ	51	56	8	115
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	538	647	74	1259
		Իրավաբանական անձ	18	27	3	48
	Ընդամենը		1355	1509	338	3202

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: ԵՏՍՍ-ում օգոստոս ամսվա ընթացքում փոխարինված 1,895 ջրաչափերի մոտ 58 տոկոսը անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն, իսկ ՄՏՍՍ-ում փոխարինված 1705 ջրաչափերի մոտ 62 տոկոսը (կամ 1049 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել ԵՏՍՍ-ի մոտավ 121,659 մ3, իսկ ՄՏՍՍ-ի՝ 44,730 մ3 վերահաշվարկված հասույթ (72.97%՝ Երևան և 26.83%՝ մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2020թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)



Հասույթի տվյալներում 2019թ. ցուցանիշից հանված են ՄՏՍՏ-ից ԵՏՍՏ տեղափոխված թվով 5 տեղամասերի (Աբովյան, Ապարան, Էջմիածին, Մասիս և Թալին) ցուցանիշները:

2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Օգոստոս ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 1,514,533 մլն դրամ, իսկ ՄՏՍՏ-ում՝ 445,390 մլն ՀՀ դրամ: Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարուժեներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների վր շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՍՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Օգոստոս ամսվա ընթացքում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 91 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 12.5 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 8 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 662 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Օգոստոս ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ներկայացված 10 000 000 ՀՀ դրամից բարձր բռնագանձման գործեր: Խոսքը վերաբերում է մասնավորապես հետևյալ ընկերություններին:

Հ/Հ	Պատասխանող	Հայցի առարկան /հայցապահանջը, հայցագիրը/, ՀՀ դրամ
1	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	14. 897. 386
2	Ազատաշեն համայնք	12. 511. 000
3	«Էլիտ Սերվիս» ՍՊԸ	11. 440. 944
4	«Նոր Հաճն» ՀՈԱԿ	114. 597.534
5	«Արտաշատի տրիկոտաժի Ֆաբրիկա» ԲԲԸ	14.009.047
	Ընդամենը	167.455.911

Առ այսօր պարտքերի մարման վերաբերյալ կնքված ժամանակացույցերի քանակը կազմում է 3387 հատ, իսկ պարտքերից ակնկալվող գումարը կազմում է 2. 680. 006. 883 ՀՀ դրամ:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը հուլիս-օգոստոս ժամանակահատվածում:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2020թ		Բավարարված		Մերժված		2017-2020թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10310	1189686302	6221	634765698	113	16650789	3370	588293778	3607	309203248

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 60,34 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1,10 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.09.2020թ. դրությամբ (մլն.դրամ)	Այդ թվում օգոստոս ամսվա հասույթ (մլն դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	4,986.0	1,646.0
Բնակիչ-բաժանորդներ	3,691.5	1,136.8
Իրավաբանական անձեր	1,294.5	509.2
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	2,113.6	559.5
Բնակիչ-բաժանորդներ	1,615.3	422.9
Իրավաբանական անձեր	498.3	136.6
Ընդամենը, այդ թվում	7.099.6	2.205.5
Բնակիչ-բաժանորդներ	5,306.8	1,559.7
Իրավաբանական անձեր	1,792.8	645.8


Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 211.1 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն. դրամ (Երևան)



2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն. դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՀԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.09.2020թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	454,209	404,833	89.1	23,194	16,627	71.7
	Առանց ջրաչափի	13,153	1,011	7.7	669	6	0.9
Մարզեր	Ջրաչափով	232,138	188,205	81.07	9,726	6,920	71.15
	Առանց ջրաչափի	21,054	1,142	5.42	240	4	1.67
Ընդամենը	Ջրաչափով	686,347	593,038	86.40	32,920	23,547	71.53
	Առանց ջրաչափի	34,207	2,153	6.29	909	10	1.10

Տվյալների բազայում 01.09.2020թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	593,265	301,407	50.80	26,080	7,584	29.08
Մարզեր	265,064	75,149	28.35	10,861	2,096	19.30
Ընդամենը	858,329	376,556	43.87	28,915	9,680	33.48

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 2587, իսկ մարզերում՝ 1568 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 128, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 185 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2303	1870	81.2
գ.Պռոշյան	1542	1015	65.8
ք.Ջրագղան, միկրոշրջան թաղ.	5847	1801	30.8

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, օգոստոս ամսին ջրաչափերի փոխարինման որոշակի աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է՝ Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 7,006, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4,552, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 826, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,311, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 784, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1123 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1013 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՅՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	292	226,442	37,733,860
Մարզեր	74	131,422	20,881,492
Ընդամենը	366	357,864	58,615,352

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի օգոստոս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.3%, ինչը ինչը 0.1%-ով պակաս է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Մարզերում այդ ցուցանիշը կազմել է 82.6%, որը 2%-ով ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:



Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն




Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից ՇՏ-նորում կարգաբերվել են 18 ՃԿՊ-ներ:

Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2020թ-ի օգոստոս ամսին, 2019թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 245 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նվազել է 902 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 33425 ԿՎտ.ժ. (6,58%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտուճաների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսուճաստիճանը է 165 հասցե: Թվով 2 հասցեում հայտնաբերվել են հավելագրում, որը ճշտագրվել է ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից:

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 469,45 ԿՎտ.ժ կամ 2.2%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին




Կատարված աշխատանքներ

Թվով 284 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 112 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրու

Մեկ հասցեում թվով 26 պնևմատիկ համակարգեր փոխարինվել են ինվերտորային համակարգով, էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 5010,27 ԿՎտ/ժամ (21%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Տեղադրված ինվերտորների սպառած էլեկտրաէներգիա



Հաշվետու ժամանակահատվածում 28 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● Օգոստոս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն նվազել է 776,080 ԿՎտ.ժամ կամ 22,83% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 474,080 ԿՎտ.ժ կամ 15,24% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն նվազել է 1,387,235 ԿՎտ.ժ կամ 17,848 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացնում են օգոստոս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Արտաշատ քաղաքի ջրագծերի թվայնացման իրականացում և US2 բազա մուտքագրում	հատ	1
Երևան քաղաքի շենքերի տեղադիրքի աշխատանքի իրականացում	տոկոս	23
Ֆիզիկական բաժանորդների նոր կետերի ավելացում	հատ	550
Իրավաբանական բաժանորդների նոր կետերի ավելացում	հատ	148
Բաժանորդների GIS կողմնորման աշխատանքներ	հատ	1
Պլանային ջրանջատումների իրականացում	հատ	6
Smart monitoring հավելվածից ստացված տեղեկատվության հիման վրա ջրագծերի վթարների թվայնացում	հատ	1
Arc Reader քարտեզների փաթեթների պատրաստում Զեյթուն և Արարկի տեղամասերի համար	հատ	2
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	38
Մալաթիա-Սեբաստիա համայնքի կոյուղագծերի թվայնացում	մետր	91407.122
Աբովյան քաղաքի կոյուղագծերի թվայնացում	մետր	41861.4178
Արագածոտնի մարզի գյուղերի թվայնացում	գյուղ	3
Երևանի տեղամասերի ջրային ցանցերի համար ստեղծված հիդրավիլ մոդելների ամբողջական մոդելի ստեղծում ըստ GIS համակարգում առկա տեղեկատվության	հատ	1
Երևանի տեղամասերի ջրային ցանցերի համար հաշվետվական գծագրերի իրականացում	հատ	200
Կատարվել է դաշտային պայմաններում Արզնի-Գետամեջի պոմպակայանի ակտիվների գնահատում	աշխատանք	1
Գնահատվել են դաշտային պայմաններում Շորշորի պոմպակայանի ակտիվները	աշխատանք	1
Մշակվել է «Ակտիվների կառավարման» գործընթացի ներդրման անհատական գործողությունների ծրագրի	հատ	1
Քարտեզների պատրաստում և տպում համայնքների համար	համայնք	6
Ջրագծերի թարմացման աշխատանքներ	հատ	6

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

«40 աղբյուր» ջրատար

«Եղեգնաձոր» ՇՏ-ի հետ համատեղ ուժերով կատարվել են վթարավերականգնողական աշխատանքներ «40 աղբյուր» ջրատարի վրա, որի արդյունքում ք. Եղեգնաձոր հասնող ջրաքանակն ավելացել է 4լ/վ-ով:



Ապարան-Ուշի-Սաղմոսավան ջրատար

«Մաշտոց» ՇՏ-ի հետ համատեղ ուժերով կատարվել են վթարավերականգնողական աշխատանքներ Ապարան-Ուշի-Սաղմոսավան ջրատարի վրա, որի արդյունքում Ուշի, Սաղմոսավան, Օհանավան և Արտաշավան գյուղեր հասնող ջրաքանակն ավելացել է 5 լ/վ-ով, ինչպես նաև վերացվել են ապօրինի երկու միացումներ:



«Փոքր Մհեր» հանգույց

«Փոքր Մհեր» հանգույցում հայտնաբերվել է վթար ($Q=25$ լ/վ), որը վերացվել է «Մաշտոց» ՇՏ-ի կողմից: Արդյունքում նույնքանով ավելացել է Երևան քաղաք մատակարարվող ջրաքանակը:



Նորաբաց պ/կ

Փոխարինվել է Նորաբացի պոմպի ելքի փականը՝ $D=300$ մմ:



Շոր-Շոր պոմպակայան

Նախկինում հայտնաբերված վթարը վերացվել է Աշտարակ ՇՏ-ի կողմից, որի արդյունքում 20լ/վ-ով ավելացել է Երևան մատակարարվող ջրաքանակը:

Արարատյան ջրատար

Շինարարի կողմից փոխարինվել է ջրագիծ՝ L=280մ, d=1000մմ:



3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Օզանյան փողոցում, ՎՋԵԲ ֆինասավորմամբ իրականացվող փողոցաշինական ծրագրի շրջանակներում Շիրակ տեղամասը ձեռնամուխ է եղել փողոցում առկա հին ջրագծերի շահագործումից հանելու գործընթացին: Ըստ այդմ, որոշում է կայացվել փողոցում առկա հին D=63մմ պողպատե ջրագիծը հանել շահագործումից խցափակման եղանակով: Արդյունքում շահագործումից հանվել է D=63մմ, L=410 գմ խողովակաշար:



● Գյումրի քաղաքում ՎՋԵԲ ֆինասավորմամբ իրականացվող փողոցաշինական ծրագրի շրջանակներում մի քանի փողոցներում, որտեղ իրականացվում են հողային աշխատանքներ պարզվել է, որ հին ջրամատակարարման ցանցի մեջ կա ջրի որոշակի հոսք: Շիրակ տեղամասի և Գոտիավորման բաժնի աշխատակիցների կողմից կատարվել են ուսումնասիրություններ հայտնաբերելու այդ խնդրի պատճառները: Արդյունքում հայտնաբերվել և խցափակվել են 3 բնակիչ-բաժանորդների հին ներքին ցանցի խողովակներ, շահագործումից հանվել են D=250մմ L=430 գմ թուջե, D=125մմ L=500 գմ, D=100մմ L=120 գմ, D=50մմ L=500 գմ հին ջրագծեր:






Չկալովկա համայնքում կատարված վթարավորոնողական աշխատանքների արդյունքում գերազմանատան մոտ գտնվող ցայտաղբյուրի փրակման վրա հայտնաբերվել է վթար՝ մոտ 1,5 լ/վ քանակությամբ:





Վարսեր համայնքում կատարված վթարավորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են ընդհանուր 2լ/վ քանակությամբ 2 վթար:

«Սևան» ՕԿՁ-ի ելքի վրա տեղադրվել է 24-ժամյա հոսքաչափի գիշերվա և ցերեկվա միջև տարբերությունը հասկանալու համար:



Վարսեր գյուղում իրականացված ուսումնասիրություններից հետո հայտնաբերվել է վթարված անհայտ փրակում, որը խցափակվել է, ինչի արդյունքում տնտեսվել է մոտ 1,5 լ/վ ջրաքանակ: Մուտքագծի վրա տեղադրվել է գիշերային ծախսաչափ:










Փափառ քաղաքի Ազատության փողոցում իրականացված վթարավորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է 6լ/վ քանակությամբ գաղտնի վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է 5լ/վ քանակությամբ ջուր: Հայտնաբերվել է նաև մի քանի օրվա ընթացքում առաջացած 10լ/վ քանակությամբ վթարը:

● Գոտիավորման աշխատանքների արդյունքում ճնշումը նվազեցնելու նպատակով Նորքի D=500մմ ջրագծի վրա՝ օրթոպեդիկ հիվանդանոցի մոտ, տեղադրվել է D=300մմ ՃԿՓ, ինչպես նաև Հին Նորքի d=150մմ ջրագծի վրա՝ Խանգաղյան 1-ին նրբանցքում, տեղադրվել է D=100մմ ՃԿՓ:

Ներկայացնում ենք Երևան քաղաքի թվով չորս տարբեր հատվածներում ջրագծերի վրա տեղադրված գիշերային ծախսաչափերի ֆիքսած տվյալները, որոնք մանրամասն ուսումնասիրվում են, ինչպես նաև իրականացվում են վթարարոնողական աշխատանքներ:







ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Ամիսը սկսվեց բավական ակտիվ, ինչը կապված էր ՀՀ ՀՕԿՀ-ին 2021թ.-ին ծառայությունների մատուցման սակագների ճշգրտման վերաբերյալ նոր հայտ ներկայացնելու պարտավորության հետ: Բնականաբար, ինչպես և անցած տարիներին, տվյալ փաստը հարուցեց լրատվամիջոցների հետաքրքրությունը, ինչը հղի էր Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի հասցեին ՋԼՄ-ների քննադատության և հանրային դժգոհության արտահայտության հավանականությամբ:

Սակայն Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/, «Մետրիկա» Խորհրդատվական ընկերության հետ համագործակցությամբ, որն ներգրավված է PR աշխատանքներում, անմիջապես հրապարակեց համապատասխան մամուլի հաղորդագրություն սակագների նոր հայտի ներկայացման հիմնավորման վերաբերյալ, որի շնորհիվ մի քանի օրում հնարավոր եղավ ոչ միայն բավարարել հանրային հետաքրքրությունն ու խուսափել բացասական ռեակցիայից, այլև Վեոլիա Ջուր ՓԲԸ-ն ներկայացվեց որպես հանրային շահի պաշտպան կազմակերպություն, որը ձգտում է նվազագույն սակագներով առավելագույն որակի ծառայություններ մատուցել բաժանողներին: Օգոստոսի մնացած ժամանակամիջոցում հիմնական աշխատանքը Veolia Armenia ֆեյսբուքյան էջով սպառողներից ստացվող դիմումները սպասարկելն է եղել, ինչպես նաև «Մետրիկա» Խորհրդատվական ընկերության հետ համատեղ համակարգում տարվող աշխատանքները արտահայտչական առավել արդյունավետ մեթոդների կիրառմամբ հանրությանը ներկայացնելը: Խոսքը հիմնականում վթարների վերացման, բաշխից ցանցի արդիականացման, համակարգի ինժեներական ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև Վեոլիա Գրուպի մասին է:




Երևան, Գյումրի, Դիլիջան, Կափան, Սևան, Վանաձոր, Արմավիր հրապարակույթների աշխարհագրությունն ընդգրկել է ողջ հանրապետությունը, սպառողներին ցույց տալու համար, որ Վեոլիա ՓԲԸ-ն գործում է ամենուր և հոգ է տանում ջրամատակարարման բարելավման մասին հավասարապես բոլոր բնակավայրերում: Ընդհանուր առմամբ Veolia Armenia էջում ապահովվել է 47 հրապարակում, ինչը կարելի է բավարար համարել, եթե հաշվի առնենք, որ օգոստոսը հանրային կյանքի ակտիվության առումով ավանդաբար հանդիսանում է <մեռյալ ամիս>, այդ թվում ՋԼՄ-ների համար: Հաշվետու ժամանակաշրջանում ՀԿԲ-ն նաև շարունակել է սպասարկել ընկերության veolia.am պաշտոնական կայքը: Այնտեղ մշտապես տեղադրվել է հրապարակման համար պարտադիր տեղեկատվությունը, իսկ ընթացիկ հրապարակույթները թարմացվել են ըստ անհրաժեշտության: Առաջին հերթին խոսքը ջրանշատույթների, գնումների և բաժանորդների սպասարկման գրասենյակների գործունեության վերաբերյալ հայտարարությունների մասին է: Բոլոր աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետներում և գործող կարգի համաձայն:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

5.1. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Ծառայությունը, յուրաքանչյուր աշխատանքային օր Ընկերությունում՝ COVID-19 համավարակի կանխարգելման և Ընկերության ընթացիք աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն փոխանցեց էլեկտրոնային գրությամբ ՀՀ Ջրային կոմիտե:
- Ջուզահեռայն գործընթացին, ՈԱԱ Ծառայությունը Ընկերության Ղեկավար կազմին և ստորաբաժանուժների պատասխանատուներին իրազեկեց Պարետի 18/08/2020 թվականի 253-Ն որոշմամբ սահմանված ժամանակավոր սահմանափակումների և այլ որոշումների վերաբերյալ:
- ՈԱԱ Ծառայությունը ՄՌՍ բաժնի հետ համատեղ օպերատիվ կերպով Ընկերությունում COVID-19-ով վարակված կամ կոնտակտավոր աշխատողների մասին համապատասխան տեղեկատվությունը տրամադրեց ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներին:
- ՈԱԱ Ծառայությունը, ելնելով Պարետի 2020թ. օգոստոսի 18-ի N 253 որոշմամբ սահմանված համապատասխան անվտանգության կանոնների ապահովման պահանջների գնահատման նպատակով, շարունակեց ստուգայցներ իրականացնել Ընկերության թվով 11 գրասենյակներում:
- Ինչպես նաև ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանուժներից ծառայությանն ներկայացվեցին կառուցվածքային ստորաբաժանուժների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:
- Ծառայությունը կազմակերպեց Ընկերության գրասենյակների մոտ 1600 քմ մակերեսի լրացուցիչ ախտահանման աշխատանքները:
- Ընկերությունը, ելնելով աշխատողների շրջանում COVID-19 համավարակի տարածման կանխարգելման անհրաժեշտությունից, շարունակեց կազմակերպել Էկոսենս բժշկական լաբորատորիաների կողմից թվով 6 աշխատողի՝ ՊՇՌ թեստավորման աշխատանքները: Աշխատողների մասնակցությունը ՊՇՌ թեստավորմանը եղել է բացառապես վերջիններիս համաձայնությամբ:

Տրամադրված անհատական պաշտպանության միջոցներ և պոստերներ /մարտ-օգոստոս




5.2. ԲՈՒԺՋՆՆՈՒՄ


- Ծառայությունը, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2003թ. մարտի 27-ի N 347-Ն որոշմամբ, «ԲԻՈՄԵՂ» կլինիկական ախտորոշման կենտրոնի հետ համատեղ կազմակերպեց և իրականացրեց Ընկերության թվով 328 աշխատակցի մանրէակրության և որդակրության բժշկական հետազոտության աշխատանքների և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկների վարման գործընթացի երկրորդ և երրորդ փուլերը:

5.3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱԸՆԵՐ

- Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 21 ապրիլի 2011 թվականի «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 529-Ն որոշման և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները՝ ՈԱԱ Ծառայությունը կազմակերպեց և իրականացրեց Ընկերության ՋՄԳՍ ծառայության թվով 11 աշխատակցի համար «Քլորի օպերատորների մասնագիտական որակավորման հեռավար դասընթաց/գիտելիքների ստուգում»:




2019-2020թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՅ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



5.4. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱՅՑՆԵՐ

● Ծառայությունը իրականացրեց Անվտանգության ստուգայցներ Ընկերության թվով 23 ՀՏԿ-ներում և 11 ստորաբաժանումում: Ստուգայցների նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում, ինչպես նաև կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

2020 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



6.1. Համակարգչային ցանց

Օգոստոս ամսվա ընթացքում IT բաժնի կողմից իրականաց հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև

- Մեկնարկել է նոր “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժնի ստեղծման ծրագիրը:
- Մշակվել է քարթրիջների և տպիչների լիցքավորման և վերանորոգման պայմանագրի կնքման աշխատանքները:
- Ստեղծվել են քարթրիջների և տպիչների լիցքավորման և վերանորոգման ներքին գործառույթներ և այդ գործառույթների կառավարման և վերահսկման գործիքներ:
- Ստեղծվել է նոր ծրագրային մոդուլ “Ինտերակտիվ” համակարգի շրջանակներում քարթրիջների և տպիչների լիցքավորման և վերանորոգման ներքին գործառույթների և այդ գործառույթների կառավարման ավտոմատիզացման համար:
- Մեկնարկել է նոր “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժնի հիմնական գործառույթներ իրականացնելու համար անհրաժեշտ գործիքների և նյութերի պլանավորման և գնման գործընթացը:
- Մեկնարկել է նոր “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժնի հիմնական ծախսվող նյութերի և սարքավորումների պլանավորման և գնման գործընթացը:
- Ստեղծվել են “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժնի հիմնական ծախսվող նյութերի և սարքավորումների ծախսի կառավարման և վերահսկման գործիքներ և ներքին գործառույթներ:
- Compliance Tool ծրագրային փաթեթը տեղադրվել է կազմակերպության բոլոր սերվերների և համակարգիչների վրա:
- Բացվել և կարգավորվել են IU-Connect հեռախոսային կենտրոն համակարգի նոր օգտատերեր՝ կարգավորվել են համապատասխան դերեր:
- Իրականացվել են IU-Connect հեռախոսային կենտրոն համակարգի օպերատորների համար ձայնային հաղորդագրությունների լսելու համար նոր դերի կարգավորում և օգտագործողների վերակարգավորում այդ նոր դերի կիրառմամբ:
- Բացվել և կարգավորվել են նոր ցանցային պանակներ ՄՌ բաժնի համար:
- Իրականացվել է ներքին հեռախոսահամարների տեղափոխում և կարգավորում Լվովյան 2 հասցեում:
- Իրականացվել է ցանցային պանակների կարգավորում՝ արտոնությունների տրամադրում, Գնումների վարչության աշխատակիցների համար:
- Մեկնարկել է “Veolia ICS Cyber Security Policy v0.1.pdf” “Վեոլիա” Խմբի նոր քաղաքականության ուսումնասիրություն և ներդրման հնարավորության գնահատում:
- Իրականացվել է ցանցի լարանցման աշխատանքներ ք. Երևան, Էրեբունի 5 նոր հասցեում ներքին ցանցի հասանելիության ապահովման նպատակով:
- ք.Երևան, Էրեբունի 5 նոր հասցեում իրականացվել է ներքին հեռախոսային համարների համար նախատեսված սարքավորման փոխարինում և վերածրագրավորում ավելացված համարների քանակի աշխատանքի ապահովման նպատակով:
- Ապամոնտաժվել են Արցախի 22 և Արցախի 28 հասցեների ցանցային սարքավորումները:
- Արցախի 22 և Արցախի 28 հասցեներից ապամոնտաժված UCOM և RossTelecom կազմակերպությունների սարքավորումները տրամադրվել են նշված կազմակերպություններին:
- Դոմենի կառավարման Active Directory համակարգում բոլոր օգտատերերի նկարագրության մեջ ավելացվել են աշխատակիցների էլ. նամակագրության հասցեները - մոտ 700 գրառում:
- Ներդրվել է “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժնի հեռախոսային կենտրոն հեռահար՝ հեռախոսագանգերի հիման վրա բարձրացվող հարցերի սպասարկման բարելավման, ինչպես նաև համակարգային մեծ փոփոխությունների, կամ որևէ համակարգերի հետ պլանային աշխատանքների իրականացման մասին տեղեկացման նպատակով:
- “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժնի աշխատանքային պրոցեսների բարելավման և հաղորդակցության հեշտացման և բարելավման նպատակով գործարկվել է նոր խմբային էլ. հասցե:
- Մեկնարկել է հեռահար տվյալներ փոխանցող ջրաչափերի սարքավորման և ծրագրային ապահովման տեսավորումը:
- Իրականացվել են լարանցման աշխատանքներ ք. Վեդի, Արարատյան 61 հասցեում ներքին ցանցի հասանելիության ապահովման նպատակով:
- Տրամադրվել է հավելյալ դիսկային տարացք ֆայլային սերվերում նախկին հեռախոսային զանգերի համակարգի ձայնագրությունների արխիվացման նպատակով:
- “Վեոլիա” Խմբի IT անվտանգության մասնագետների հարցման հիման վրա ստեղծվել և տրամադրվել է “Վեոլիա Ջուր” ՓԲԸ-ի ինտերնետից հասանելի IP հասցեների ցանկ, որը ներառում է իր մեջ

- ▶ IP հասցեները
- ▶ Այդ IP հասցով հասանելի սերվերի կամ համակարգի տեխնիկական նկարագրությունը
- ▶ Այդ IP հասցով հասանելի սերվերի կամ համակարգի դերը և կիրառման ոլորտը
- ▶ Այդ IP հասցով հասանելի սերվերի կամ համակարգի աշխատանքի անընդհատության և պարունակվող տվյալների կարևորության գնահատականը:
- Իրականացվել են հանդիպումներ COP2020 առողիտորական ծրագրի քննարկման նպատակով:
- Իրականացվել են հանդիպումներ դեկտեմբերին պլանավորված IT առողիտի անցկացման ընթացակարգի և այլ մանրամասների քննարկման նպատակով:
- Արգելափակվել են աշխատանքից հեռացված աշխատակիցների ներքին բոլոր համակարգերի մուտքի հնարավորությունները:
- Փակվել է ավելի քան 280 IT աջակցության տոմս:
- Իրականացվել է աջակցություն տարբեր ստորաբաժանումների տեղափոխության ընթացքում համակարգիչների և հարակից սարքավորումների միացման և ցանցի ապահովման հարցում:
- Մեկնարկել է Առևտրային տնօրինության համար նոր հաշվետվությունների մշակումը Ինտերակտիվ համակարգի հաշվետվությունների բլոկի համար:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Օգոստոս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Միշարքթարմացումներ և փոփոխություններ են կատարվել ինտերակտիվ և փաստաթղթաշրջանառություն ծրագրերում:

- Կատարվում են մի շարք թարմացումներ՝ 1-85 զանգերի կենտրոնի նոր ծրագրային ներդրման աշխատանքների հետ կապված:

- Ակտեր
Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է օգոստոս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	4	2.5	0.4
Էրեբունի	21	10.3	1.8
Շենգավիթ	5	0.8	0.1
Կենտրոն	4	6.5	1.2
Արաբկիր	11	4.3	0.7
Մաշտոց	28	18.1	3.0
Շահումյան	13	6.3	1.0
Քանաքեռ-Զեյթուն	8	5.1	0.8
ԽՈՇՈՐ	1	1.5	0.0
ՋԿԲ	81	150.5	24.0
Ծիրակ	4	0.8	0.1
Արարատ	5	0.5	0.1
Աբովյան	66	30.6	4.8
Հրազդան	4	1.1	0.2
Ապարան	3	0.7	0.1
Արտաշատ	15	3.0	0.5
Գավառ	20	4.6	0.7
Գորիս	1	0.1	0.0
Եղեգնաձոր	1	0.5	0.1
Էջմիածին	5	1.8	0.3
Թալին	1	0.3	0.0
Իջևան	1	0.1	0.0
Կոսպան	12	6.9	1.1
Մասիս	19	9.0	1.4
Մեղրի	1	0.3	0.0
Արմավիր	3	2.7	0.5
Սևան	2	1.5	0.2
Աշտարակ	17	3.4	0.5
Զարենցավան	2	0.4	0.1
Սպիտակ	4	0.7	0.1
Ստեփանավան	2	1.0	0.2
Ընդամենը	364	275.9	44.2

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է օգոստոս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Տեղամաս	Լաբորատորիա		Մնասրջություն	
	քանակ	հաճ. հի/մ	քանակ	հաճ. հի/մ
Հյուսիս	10	3.50	56	2.29
Էրեբունի	8	4.09	43	1.26
Շենգավիթ	4	0.57	25	8.24
Կենտրոն	11	7.69	35	0.61
Արաբկիր	4	0.63	60	0.38
Մաշտոց	3	2.06	12	0.09
Շահումյան	17	6.11	49	0.42
Քանաքեռ-Զեյթուն	7	8.36	26	0.24
Լոռի	4	6.34	40	0.24
Արթիկ	12	5.35	43	0.22
Արարատ		-	5	0.03
Աբովյան	16	8.06	58	0.45
Հրազդան	74	25.81	49	0.42
Ալավերդի	3	4.31	41	0.31
Աշոցք	1	0.52	11	0.09
Արտաշատ	14	1.65	180	1.43
Գավառ	2	0.43	22	0.11
Դիլիջան	1	0.41	5	0.01
Էջմիածին	15	7.25	29	0.59
Թալին	1	9.77	1	1.48
Իջևան		-	27	0.13
Կապան	2	1.03	4	0.04
Ճամբարակ	1	0.06		-
Մասիս	17	9.83	23	0.30
Մեղրի		-	2	0.01
Նոյեմբերյան	1	0.52	15	0.10
Արմավիր	14	7.22	34	0.18
Ջերմուկ		-	6	0.01
Սևան	5	1.62	39	0.19
Աշտարակ	6	1.79	33	0.44
Զարենցավան	4	1.43	25	0.10
Սիսիան		-	13	0.15
Սպիտակ	1	0.13	25	0.07
Ստեփանավան	5	3.28	9	0.14
Տաշիր	2	1.03	12	0.08
Ընդամենը	265	130.84	1057	20.83



«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am